ՆՄՈՑՇ ՄԸ ՀԱՅ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես էջ 326)

Ամիսքը կը զմայլի բնութեան մունջ զարդերուն վրայ. երբեմն կը հրճուի կանաչազարդ բլրակաց հետ, է երբեմն՝ զի կը սեւեռի աւերարդ ժայռերուն վրայ. բարձրէն կ'իջնէ կը հանգչի սրընթաց գետին եզերքը, չուզեր միանալ այն ջրին հետ՝ որ կ'ամաչարէ անհետանալու ովկիանոսին մէջ. խոյս կու տայ մանգալու մարգերուն վերև՝ ուր կը գտնէ բնութեան հաւատարիմ զաւակները, Ծաղիկները... Պահ մի կը զսպէ իր յուզմունքը և անդէն դէպ ի կապուտակ երկինք կը սլանայ. բայց ահա երամ մի ձմեռուան օդաչու սուրհանդակներ կը յափշտակեն զայն։ — Ո՞ւր պիտի գնայ. կ'անցնի ծովերէն, ցամաքներէն, լեռներէն, գետերէն և վերջապէս կը հանգչի բարձրագիր սրբաբավայրի մը մէջ... Նոր տեսարան, անակնկալ պատահում. հոս խունուած է մի զուտ բարեպաշտ ժողովուրդ. մի քանի պլպլալացող լոյսեր լոկ՝ կը մեղմեն սրբաբավայրին մէջ տիրապետող խաւարը. Աբեղայ ոմն բարձրացած է սեղանին վերեւ. բայց ինչո՞ւ այդչափ շուարած է և այլակերպած... Պակսած է պատարագի գինին. վազեց և հասաւ օդաչու սուրհանդակներէն մին՝ կացին մի ողկոյզ խաղող, մատոյց զայն աբեղային. գինին կը կազմուի։ — Հրաշք... զոչեց ժողովուրդը և համբուրեց այն օդաչու սուրհանդակը, որ իրենց ծանօթ էր Կռունկ անուամբ, և անդէն միաբան դրոշմեցին սրբաբավայրին անունը Կռունկուվանք*։ Ահաւասիկ ալ այնկից վերջը Կռունկն հայրենակից թռչուններուն մէջ ամենէն սիրելի և հաւատարիմ հաւն համարեցաւ. պանդուխտ հայն հայրենեաց և իր հեռի սիրելեաց սիրոմբ սրտաբեկ՝ անոնց վրայօք խաղերներ կը հարցնէր սուրհանդակ Կռունկին, շեշտելով, «Կռռնկ, ռշատի՞ կռռ գաս, ծառայ եմ ձայնիդ. Կռռնկ մեր աշխարհեն խապրիկ մը չռռնի՞ս.....»։

Ուրիշ անգամ մեր այս սիրուն բարձրաբերուն թռչունը նկարագրած եմք, և իր զարմանալի ձիրքերն պատմած*։

Կռունկով ահաւասիկ կը սկսիմք շարունակել և զոցել հայ թռչնաբանութեան նմոյշնիս, պակասը և վրիպակը թողլով լրացրնելու ուրիշ հմուտ ազգային կենդանաբաններու։

Կռունկն յիշած ժամանակս՝ անդէն մտացս մէջ կը ծագի իր ընկերակիցն՝ ձիւնափետուր Արագիլն։ Ազգային զեղջուկները երախտագէտ են այս մանկասէր (տղոց հետ կ'խաղալ միշտ խաղալու) հաւին՝ որ շարունակ գիշերները իրենց խրճիթներուն պահպանութիւն կ'ընէ. աւազակը թող չի մերձենայ հայ խրճթին, ահա անդէն Արագիլն բախելով իրարու իր մեծկակ կոտուցներն՝ ուժով աղաղակ մը կը ձգէ, ուսկից իր տէրն արթննալով՝ կը հալածէ զող աւազակը։

Արագիլը մեր երկրին բնաշխարհիկ բլլալուն ոչ միայն մենք վկայ կ'բլլամք, այլ և եւրոպացին Շանտր. թռչունք որ ինքը իսօսի. «Շրջան մը կ'ընեմք գիւղին (Սանտարակէ, յԵրևան) չորս կողմը, ուր բազմաթիւ բոյնք են արագիլ թռչնոյ, այրելի նիւթոց բարձանց վրայ դրուած, և մեծապէս հետաքննելի տեսօք, բովանդակ Հայաստանի մէջ յարգի են արագիլք. զրեթէ ամէն տուներու վրայ բոյներնին դրած են. և շատ են այս երկայնոտն պանդուխտներու վրայ յօրինուած ժողովրդական քերթուածք». յորոց մինն ի սէր մեր սիրուն արագլին ահաւասիկ հոս յիշեմք.

Արագիլ, բարով եկիր,
Դու արագիլ բարով եկիր.
Ըմէ գարնան նշան բերիր,
Դու մեր սրրտիկ զբաւրթ արիր
. . . . . .

---

* Սոյն դէպքը կը պատմէ Ինճիճեան Հայաստանի տեղագրութեան մէջ. էջ 144։

* Ի Նոր Կենդանաբանութեան և Մարդաբանութեան, հայկական ծանօթութեամբք. 1896 Ս. Ղազար Մխիթարեան տպարան։